1. Ո՞ր պնդումն է ճիշտ.
1) վկան կարող է իր բնակության վայրի առաջին ատյանի դատարանի կողմից հարցաքննվել դատական հանձնարարության կարգով, եթե վկայի ներկայանալը դատաքննությանը նպատակահարմար չէ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով,
2) գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը,
3) եթե հայցապահանջն իր բնույթով այնպիսին է, որ հայցադիմում ներկայացնելու պահին անհնար է որոշել հայցագնի չափը, ապա դատարանը հետաձգում է պետական տուրքի վճարումը և դատական ակտով անդրադառնում գործի քննության ընթացքում որոշված հայցագնին համապատասխան պետական տուրք գանձելու հարցին,
4) առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե ամուսինը կնոջ հղիության ժամանակ առանց կնոջ համաձայնության ամուսնալուծության հայցադիմում է ներկայացրել դատարան:

2. Ռ.-ն, ով աշխատում է «Տ» ՍՊԸ-ում՝ որպես գործավար, ընկերության տնօրենի հանձնարարությամբ կատարում է լուսանկարներ: Ընկերությունը մտադրություն է ունենում նշված լուսանկարներով կազմել պատկերազարդ գրքեր և վաճառել, սակայն նշված նպատակի մասին Ռ.-ն չի տեղեկացվում:
Լուսանկարները հանձնելուց հետո «Տ» ՍՊԸ-ն կազմում և վաճառքի է ներկայացնում Գյումրի քաղաքի տեսարժան վայրերը ներկայացնող պատկերազարդ գրքեր:
Ռ.-ն հայտնում է «Տ» ՍՊԸ-ի տնօրենին, որ ընկերությունը պարտավոր է իրեն վճարել հոնորարի կրկնապատիկի չափով փոխհատուցում, քանի որ իր կողմից կատարված լուսանկարներն ընկերությունն օգտագործել է ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու և շահույթ ստանալու համար, սակայն սահմանված կարգով իր համաձայնությունը չի ստացել: Բացի այդ, տպագրված գրքերում չի նշվել լուսանկարների հեղինակի անունը, ինչը նույնպես իր իրավունքների խախտում է:
«Տ» ՍՊԸ-ի տնօրենը առարկում է ներկայացված պահանջի դեմ՝ պատճառաբանելով, որ Ռ.-ն կատարել է իր աշխատանքը, իսկ աշխատանքների արդյունքի իրավատերը

ընկերությունն է, քանի որ աշխատանքային պայմանագրով կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ։

Նկարագրված փաստերից ելնելով՝ վերլուծել իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերը՝ նշելով, թե որ կողմի պահանջներն են հիմնավոր, իսկ որ կողմինը՝ անհիմն։